**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<08>> փետրվարի 2024թ. N ՄՌ/82-Ա

ք. Արմավիր

## ՎԱՐԴԱՆ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ «ՀԱՅԹԱՂԻ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2024 թվականի փետրվարի 8-ի զեկուցագիրը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Հայթաղի Հ. Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Հայթաղի Հ. Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Վարդան Ասատրյանին:
2. Վարդան Ասատրյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-02-08 14:56:23 GMT+4
Հաստատված է ԷՀՍԱԳ-ի կողմից

eID

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**